

ՀԾ «Բանկ-Հաճախորդ»

Հեռակառավարման համակարգի տեղեկատվական ամփոփագիր

Մարտի 14, 2018թ.

ՀԾ «Բանկ-հաճախորդ» համակարգը (այսուհետ՝ Համակարգ) նախատեսված է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հաշվետեր հաճախորդ (այսուհետ՝ Հաճախորդ) հանդիսացող.

- անհատ ձեռնարկատերերի համար
- իրավաբանական անձանց համար
- իրավաբանական անձ չհանդիսացող/իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպությունների համար

Համակարգի հնարավորությունները

Համակարգի օգնությամբ Հաճախորդը կարող է ձևակերպել և Բանկ ուղարկել, ինչպես նաև Բանկից ստանալ հետևյալ էլեկտրոնային փաստաթղթերը: Փաստաթղթերը և հանձնարարականների մերժման հիմքերը և սահմանափակումները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով:

Բանկ ուղարկվող էլեկտրոնային փաստաթղթերը՝

- վճարման հանձնարարագիր
- խմբային վճարման հանձնարարագիր
- կանխիկ միջոցների ստացման հայտ
- ազատ ֆորմատի հաղորդակցություն
- արտարժույթի փոխանակման հայտ

Բանկից ստացվող էլեկտրոնային փաստաթղթերը՝

- հաշվից քաղվածք
- հաշվով վարկային մուտքերի ապակողավորում (քաղվածքի էլեկտրոնային փաստաթղթեր)
- Բանկից տեղեկատվական և այլ ինֆորմացիայի ստացում (ազատ ֆորմատի հաղորդակցություն)

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել: Հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի www.conversebank.am ինտերնետային կայք կամ զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով:

Փոխանցումների կատարման ժամկետներ

ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով փոխանցումները կարող են կատարվել նույն բանկային օրը, եթե վճարման հանձնարարականները ներկայացվել են մինչև տվյալ բանկային օրվա 15:00:

15:00-ից հետո ներկայացված հանձնարարականները կկատարվեն հաջորդ բանկային օրը:

Ռուբլիով փոխանցումները կարող են կատարվել նույն բանկային օրը, եթե վճարման հանձնարարականները ներկայացվել են մինչև տվյալ բանկային օրվա 12:00:

12:00-ից հետո ներկայացված հանձնարարականները կկատարվեն հաջորդ բանկային օրը:

Այլ արժույթներով փոխանցումները կատարվում են 3 բանկային օրվա ընթացքում:

Սպասարկման վճար

Սպասարկման վճարը գանձվում է պայմանագրի կնքման ամսվան հաջորդող ամսից և գանձվում է ոչ ուշ, քան մինչ հաշվետու ամսվա վերջին աշխատանքային օրը:

Ամսական 50 և ավելի գործարք կատարելու դեպքում	3,000 ՀՀ դրամ ամսական
Ամսական մինչև 50 գործարք կատարելու դեպքում	6,000 ՀՀ դրամ ամսական

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

Անհատ ձեռնարկատերերի դեպքում՝

- անձը հաստատող փաստաթուղթ

Իրավաբանական անձանց կամ կազմակերպությունների դեպքում՝

- իրավաբանական անձի կամ կազմակերպության տնօրենի անձը հաստատող փաստաթուղթ, եթե վերջինիս լիազորությունները կանոնադրությամբ որևէ կերպ սահմանափակված չեն

կամ

- իրավաբանական անձի կամ կազմակերպության անունից գործելու լիազորագիր ունեցող այլ անձի անձը հաստատող փաստաթուղթ

Ընդհանուր դրույթներ անվտանգության վերաբերյալ

ՀԾ «Բանկ-հաճախորդ» համակարգի միջոցով փոխանցվող էլեկտրոնային փաստաթղթերի պաշտպանությունը չարտոնագրված մուտքից, ինչպես նաև նրանց հեղինակի ինքնությունը, իսկությունը և ամբողջականության հաստատումը ապահովվում է համակարգի մուտքի գաղտնաբառերի, էլեկտրոնային փաստաթղթերի անհատական կոդավորման, բանալիների օգտագործման շնորհիվ: